ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2026թ. /հուլիս 3, Նաիրի համայնք, Պռոշյան բնակավայր/

օրակարգ՝

Կոտայքի մարզի Նաիրի համայնքի Պռոշյան բնակավայրի Գ. Չաուշի խճուղի 1/72 հողամաս հասցեում նախատեսվող բնակելի համալիրի կառուցում

2026թ. հուլիսի 3-ին, Կոտայքի մարզի Նաիրի համայնքի Պռոշյան բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում կայացավ Պռոշյան բնակավայրի Գ. Չաուշի խճուղի 1/72 հողամաս հասցեում նախատեսվող բնակելի համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ հանրային երկրորդ լսումը, որը օրենքով սահմանված կարգով ներկայացրեց ՇՄ նախարարության «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի մասնագետ Շ. Կարապետյանը: Հանրային լսմանը ներկա էին նաև համայնքապետարանի աշխատակիցները, բնակիչներ, նախաձեռնող թիմի ներկայացուցիչները:

Շ.Կարապետյանի կողմից ներկայացվեց Նախագծի և ՇՄԱԳ հաշվետվության վերաբերյալ ՇՄՆ և շահագրգիռ այլ կառույցների կողմից ներկայացված դիտողությունների և առաջարկությունների, լրամշակման ներկայացման օրենսդրական ընթացակարգերը, նախատեսվող գործունեության շահագործման ընթացքում շրջակա միջավայրի բաղադրիչների վրա սպասվող հիմնական ազդեցությունները: Քննարկվեցին նախատեսվող գործունեության իրականացման համար անհրաժեշտ մոտակա ենթակառուցվածքների ապահովման, ինչպես նաև համապատասխան իրավասու մարմիններից և կազմակերպություններից անհրաժեշտ համաձայնեցումների ձեռքբերման հետ կապված հարցերը: Հանրային լսումն անցավ արդյունավետ քննարկման մթնոլորտում:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
գլխավոր մասնագետ՝ Շ.Կարապետյան

«ՎԻ.ԷՅՋ.ԷՍ» ՍՊԸ Ձեռնարկողի ներկայցուցիչ Ս. Կարապետյան